Ներկայացվում է յուրաքանչյուր ամիս մինչև հաջորդող ամսվա 5-ը

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունում քաղաքացիներից ստացված առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև աշխատակազմի և մարմնի ղեկավարի կողմից կատարած քաղաքացիների ընդունելության թվաքանակի, բարձրացված հարցերի բնույթի և քննարկման արդյունքների մասին

1. 2018 թվականի մայիս ամսվա ընթացքում քաղաքացիներից ստացվել է թվով 27 առաջարկություն, դիմում և բողոք, որից 10- ը վերահասցեագրվել է ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից.

Դիմումներն ըստ բնույթի	Ընդամենը	Պատաս-խանվել է	որից			Ծանոթություն
			Տրվել է դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պար-զաբանում	
Գետնախնձորի պալար-ների մշակություն և դրանց վերամշակման ար-տադրություն կազմակեր-պելու վերաբերյալ առա-ջարկությունն իրակա-նացնելու գործում աջակ-ցություն ցուցաբերելու և ընդունելություն նշանա-կելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Իրեն պատկանող հողա-մասին հարակից տարած-քում առկա ծառերը կտրե-լու թույլտվություն ստանա-լու գործում օժանդակելու	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ ծառահատման թույլտվություն ստանալու վերաբերյալ նրա դիմումը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 23.05.2018թվականի N ԱԽ/ԱԲ-2/4649-18 գրությամբ

մասին						վերահասցեագրվել է ՀՀ բնապահպանության նախարարություն:
Գյուղատնտեսության զարգացման իր կողմից մշակված ծրագրի իրականացման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Առանց նիտրատների պարունակության բակտերիոլոգիական պարարտանյութերի արտադրության կազմակերպման հարցի քննարկում անցկացնելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ կնքված երինջների հատկացման պայմանագիրը վերանայելու, տնտեսությունը վերականգնելու գործում աջակցություն ցուցաբերելու, ֆերմերային տնտեսությունը զարգացնելու նպատակով անասուններ տրամադրելու մասին	2					2 դիմում ընթացքի մեջ է:
Համայնքային անասնաբույժների հաստիքների սահմանման ժամկետների, վարձատրության չա-	1					1 դիմում ընթացքի մեջ է:

փի և կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին						
Ոռոգման ջրի մատակարարումը կարգավորելու մասին	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ ոռոգման ջրի մատակարարման վերաբերյալ նրա դիմումը ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2018 թվականի մայիսի 30-ի N ԱԽ/ԱԲ-2/4907-18 գրությամբ վերահասցեագրվել է ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե:
Դիզվառելիքի սուբսիդավորված գնի խախտումներով վաճառքի դեպքերը բացառելու և ոռոգման ջրի թանկացումը կանխելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ 2018 թվականի մայիսի 31-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալի մոտ նրա հետ կայացած հանդիպման ընթացքում տրվել է համապատասխան պարզաբանում պետական աջակցության գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման համար ծրագրի շրջանակներում հատկացվող դիզելային վառելիքի սուբսիդավորման գումարի, վաճառքի գնի և չափաքանակների վերաբերյալ: Միաժամանակ առաջարկվել է դիմումատուին ոռոգման ջրի թանկացման վերաբերյալ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ներկայացնել դիմում՝ հիմնավորող փաստաթղթերով:

Խոզերի անկման պատ-ճառը պարզելու և կրած վնասի դիմաց փոխհա-տուցում տրամադրելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Այգեգործության զար-գացման ուղղությամբ մի-ջոցներ ձեռնարկելու մա-սին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ հանրապետությունում գործում են բազմաթիվ պտուղ-բանջարեղեն վե-րամշակող ձեռնարկություններ, որոնք հիմնականում աշխատում են տեղական հումքով: Թեք լանջերի վրա գտնվող պտղատու այգիներում կաթիլային ոռոգման ներդրման խնդրի վերաբերյալ տեղեկացվել է դիմումատուին, որ ՀՀ կառավա-ության 2017 թվականի դեկ-տեմբերի 21-ի N 53 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսա-դրույքների սուբսիդավորման ծրա-գիրը, որով նախատեսվում է խթանել բազմամյա տնկարկներում՝ պտղատու և խաղողի այգիներում բարձրարժեք մշակաբույսերի դաշ-տերում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման գործ-ընթացը՝ սուբսիդավորելով կաթի-լային ոռոգման համակարգերի ներ-դրման նպատակով մինչև 3 տարի մարման ժամկետով տրամադրվող

						նպատակային վարկերի տոկոսադրույքներն այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն առավելագույնը 2%-ով: Մեկ հա հողատարածքում համակարգի ներդրման համար միջին արժեք է սահմանվել 1.3 մլն դրամը, տրամադրվող վարկի մարման ժամկետը՝ 3 տարի:
Տարբեր ծառերի տնկիներ հատկացնելու մասին	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ 2017 թվականի նոյեմբեր ամսին նրան տրամադրվել է պտղատու ծառերի տնկիներ, որի համար նրա կողմից ներկայացվել է ստացական: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ նրա խնդրանքը հաշվի կառնվի և աշնանը կտրամադրվի պտղատու ծառերի տնկիներ:
Կոմբայն հատկացնելու մասին	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ հացահատիկահավաք կոմբայն ձեռք բերելու համար նա կարող է օգտվել ՀՀ կառավարության կողմից մշակված լիզինգի աջակցության ծրագրից: Կոմբայնի ձեռքբերման համար սահմանվել է 10 տարի մարման ժամկետ, լիզինգի տարեկան մինչև 9% տոկոսադրույք, որի 7 տոկոսային կետը սուբսիդավորվում է: Լիզինգը տրամադրվում է ՀՀ դրամով, լիզինգի ձեռքբերման գնի 20%-ի չափով կանխավճարի վճար-

						ման պայմանով, լիզինգի առարկան բանկի կամ կազմակերպության հաշվին լիզինգի պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում ապահովագրվում է վնասվածքի և կորստյան ռիսկերից: Սեփականության իրավունքի պետական գրանցման վճարը (պետական տուրք) տրակտորների և կոմբայնների համար կազմում է 5000 ՀՀ դրամ, որը կարող ՝է ներառվել լիզինգի գումարի մեջ: Սեփականության իրավունքի փոխանցման վճարը՝ տրակտորների և կոմբայնների համար սահմանված է 5000 ՀՀ դրամ: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ կոմբայն ձեռք բերելու համար կարող է դիմել «ՓՄՁ ներդրումներ» ՈՒՎԿ և «ԱԳԲԱ լիզինգ» ՓԲԸ-ներին:
Ֆերմերային տնտեսություն հիմնելու գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Սոցիալական վիճակը բարելավելու նպատակով տնամերձ և վարելահող հատկացնելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Խաղողի մեքենայացված այգեթաղ կատարելու վերաբերյալ գյուտի ներ-	1					1 դիմում ընթացքի մեջ է:

դրմանն աջակցություն ցուցաբերելու մասին						
Իրեն պատկանող կովերի բրուցելոզ հիվանդությամբ վարակվածությունը ճշտելու նպատակով կրկնակի ուսումնասիրություն կատարելու և կենդանիների ոչնչացման դեպքում փոխհատուցում տրամադրելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Ընդամենը	27	10	0	0	10	17 դիմում ընթացքի մեջ է:
Որից՝ ՀՀ կառավարության աշխատակազմից վերահասցեագրված						
Կաթի մթերման գնի նվազեցումը կանխելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին	1	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ նրա դիմումն աշխատանքային կարգով քննարկվել է «Բորիսովկա» ՍՊԸ-ի տնօրենի հետ և պայմանավորվածություն է ձեռք բերվել ընկերության կողմից կաթի մթերման գինն առաջիկայում չնվազեցնելու վերաբերյալ: Շուկայական տնտեսության պայմաններում գյուղատնտեսական մթերքների այդ թվում՝ կաթի իրացման գները ձևավորվում են առաջարկի և մթերող մասնավոր տնտեսավարողների փոխադարձ համաձայնությամբ, ամրագրվում է նրանց միջև կնքված կաթի գնման պայմանագրերում: ՀՀ կառավա-

						ությունը դրանց միջամտելու լիազորություն չունի: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ գյուղատնտեսական հումքի մթերման գործընթացը գտնվում է ՀՀ կառավարության մշտական ուշադրության կենտրոնում և ՀՀ վարչապետի ու ՀՀ գյուղատնտեսության նախարարի մոտ վերամշակող ընկերությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած խորհրդակցությունների և քննարկումների ընթացքում մշտապես անդրադարձ է կատարվում մթերումների գործընթացին և գներին, իսկ մթերողներին առաջարկվում է գյուղատնտեսական հումքը մթերել երկուստեք փոխշահավետ գնով: Մասնավորապես՝ կաթի մթերման հարցը 2018 թվականի մայիսի 11-ին քննարկվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատարի, իսկ մայիսի 13-ին ՀՀ առաջին փոխվարչապետի մոտ, որոնց մասնակցել են կաթնամթերք արտադրողների միության, ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության, կաթ արտադրող և վերամշակող ընկերությունների ներկայացուցիչներ: Քննարկումների արդյունքում որոշվել է հարցին տալ փոխզիջումային

						տրամաբանական լուծում և առաջիկայում կաթի մթերման գինը չնվազեցնել:
Անասնապահությամբ զբաղվելու համար գյուղատնտեսական կենդանիներ հատկացնելու մասին	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ անասնապահությամբ զբաղվելու և գյուղատնտեսական կենդանիներ ձեռք բերելու համար կարող է օգտվել գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից, որով նախատեսվում է գյուղատնտեսական վարկերի տրամադրում: Վարկերը տրամադրվում են մինչև 14% տոկոսադրույքով՝ 3-10 մլն. դրամ գումարի սահմաններում մինչև 5 տարի մարման ժամկետով՝ հաշվի առնելով ներդրումների ուղղվածությունը: Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի և գյուղատնտեսական կոոպերատիվների համար վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրառկանացվի այն հաշվով, որ վարկերը տնտեսավարողներին տրամադրվեն 3%, համայնքների գյուղացիական տնտեսություններին՝ 5% տոկոսադրույքով, իսկ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերին և գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ 3% տոկոսադրույքով:

						Սուբսիդավորվող վարկերի տրամադրման հայտի ընդունման, քննարկման և վարկի տրամադրման նախապայման է հանդիսանում Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից ուսուցման արդյունքում տնտեսավարողներին տրամադրված հավաստագիրը: Առաջարկվել է դիմումատուին դիմել նաև Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնին և «Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ-ին: Միաժամանակ տեղեկացվել է դիմումատուին, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում է միայն նպատակային ծրագրեր իրականացնելու համար, ուստի գյուղատնտեսական կենդանիներ ձեռք բերելու համար աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ նրա խնդրանքը հնարավոր չէ բավարարել:

Հատկացված երինջների հիվանդության հետևանքով անկման պատճառով կրած վնասի դիմաց որպես փոխհատուցում երինջների համար տարաժամկետ վճարման ենթակա գումարները զիջելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Կարտոֆիլի բերքի կորստի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	1	1			1	1 դիմումատուի տեղեկացվել է, որ ՀՀ Նախագահին, ՀՀ վարչապետին ուղղված նրա 2017 թվականի հոկտեմբերի 20-ի, դեկտեմբերի 14-ի և 2018 թվականի մայիսի 15-ի նույնաբովանդակ դիմումները՝ ոռոգման ջրի անբավարար մատակարարման պատճառով կարտոֆիլի բերքի կորստի վերաբերյալ, ՀՀ գյուղատնտեսության նախարարի համապատասխանաբար՝ 2017 թվականի հոկտեմբերի 31-ի ՈՒԱ/ՌՆ-1/9825-17, դեկտեմբերի 21-ի ՈՒԱ/ՌՆ-1/11572-17 և 2018 թվականի մայիսի 22-ի ՈԱԽ/ՌՆ-1/4600-18 գրություններով՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի, վերահասցեագրվել են ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե:

Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման և գյուղմթերքի արտահանման վերաբերյալ ներկայացված առաջարկությունների իրականացմանն աջակցություն ցուցաբերելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Որպես գյուղատնտեսության գծով խորհրդատու աշխատանքի ընդունելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Ծրագրային առաջարկի քննարկում կազմակերպելու, ծրագրերի իրականացման հետ կապված հարցերի պարզաբանման նպատակով ընդունելություն անցկացնելու մասին	1	1			1	ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2018 թվականի մայիսի 24-ի ՈԱԽ/ԱԲ-2/4691-18 գրությամբ առաջարկվել է ՀՀ կառավարության աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և դիմումների քննարկման վարչության պետին՝ դիմումը վերահասցեագրել այլ գերատեսչությունների, քանի 2018 թվականի մայիսի 21-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալի մոտ նախարարության համապատասխան մասնագետների և դիմումատուի մասնակցությամբ կայացած քննարկման ընթացքում պարզվել է, որ դիմումատուի կողմից ներկայացված առաջարկներն առնչվում են էկոնոմիկայի,

						պաշտպանության, առողջապահության և այլ ոլորտների:
Հացահատիկի մթերման գինը կարգավորելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Անասնաբուծության զարգացմանն ուղղված ծրագրային առաջարկի իրականացման գործում աջակցություն ցուցաբերելու, տարաժամկետ վճարման պայմանով ձեռք բերված տոհմային երինջների անկման և հիվանդությունների հետևանքով կրած վնասը փոխհատուցելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Ժամկետանց և ԴԱՀԿ-ի վարույթում գտնվող գյուղատնտեսական վարկերի մարման ուղղությամբ ձեռնարկվող միջոցների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին	1					1 դիմում ընթացքի մեջ է:
Ընդամենը	10	4			4	6 դիմում ընթացքի մեջ է:

2018 թվականի մայիս ամսվա ընթացքում կատարվել է քաղաքացիների 22 ընդունելություն, որից մարմնի ղեկավարի մոտ 15 ընդունելություն:

Ընդունելության ընթացքում քաղաքացիների կողմից բարձրացված հարցերի բնույթը	Ընդամենը	Տրվել է դրական լուծում	Մերժվել է	Տրվել է պարզաբանում	Ծանոթություն
Դիզելային վառելիք հատկացնելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող՝ պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին մատչելի գներով դիզելային վառելիքի ձեռքբերման ծրագրի շրջանակներում վառելիք տրամադրելու պայմանները:
Մթերված խաղողի արժեքի վճարման հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	2	2			
Կարկուտի հետևանքով այգիներին հասցված վնասի դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ նրան պատկանող այգու կարկտահարության հետևանքով կրած վնասի չափի վերաբերյալ Կոտայքի մարզային հանձնաժողովի կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարություն դեռևս տեղեկատվություն չի ներկայացվել:
Ելակի և ոչխարի մսի արտահանման պայմանների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին	1	1			

Աշխատանքով ապահովելու մասին	1			1	1 դիմումատուի պարզաբանվել է, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ոլորտում, այդ թվում ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում գործում է քաղաքացիական ծառայության համակարգը, ըստ որի թափուր պաշտոններում նշանակվում են մրցութային կարգով, ուստի անհրաժեշտ է հետևել «Հանրային ծառայություն» շաբաթաթերթին կամ քաղաքացիական ծառայության խորհրդի ինտերնետային կայքին, որտեղ տպագրվում են հանրապետությունում առկա քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթներ անցկացնելու վերաբերյալ հայտարարությունները:
Հատապտղի այգի հիմնելու հարցում օժանդակություն ցուցաբերելու մասին	1	1			
Ընդամենը	22	4		18	
այդ թվում անձամբ մարմնի ղեկավարի կողմից կատարած ընդունելության արդյունքները					
Տնամերձ հողամասի տնօրինման հետ կապված վիճահարույց հարցի լուծման գործում օժանդակություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ հողամասի տնօրինման հարցի լուծումը դուրս է ՀՀ գյուղատնտեսության նախարարության լիազորությունների շրջանակից: Միաժամանակ քաղաքացուն տրվել է խորհրդատվություն հարցի լուծման համար իրականացվելիք քայլերի վերաբերյալ:
«Շենիկ» ՋՕԸ-ի կողմից պայ-	1			1	Քաղաքացուն առաջարկվել է դիմել ՀՀ

մանագրային պարտավորություններ կատարումն ապահովելու գործում օժանդակություն ցուցաբերելու մասին					էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կառավարման ոլորտում գործող ջրային տնտեսության պետական կոմիտե կամ հարցը վիճարկել դատական կարգով:
Գեղարքունիքի մարզում փոքր սպանդանոց հիմնելու հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն առաջարկվել է դիմել ՀՀ ԳՆ ՍԱՊԾ՝ փոքր սպանդանոցների հիմնման ծրագրի շրջանակում հարցի լուծման հնարավորությունը քննարկելու նպատակով:
ՀՀ Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանում անասնաբուծության ոլորտում առկա խնդիրները լուծելու և աշխատանքով ապահովելու հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Հանձնարարվել է նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության պետ Լևոն Տեր-Իսահակյանին՝ ուսումնասիրել բարձրացված հարցերը հնարավորության դեպքում աջակցել քաղաքացուն:
Ոչխարաբուծական ֆերմայի վերականգնման և արտադրանքի արտահանման կազմակերպման գործընթացի վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու և աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Հանձնարարվել է նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության պետ Լևոն Տեր-Իսահակյանին աջակցել քաղաքացուն:
Մեքենայացված եղանակով խաղողի այգեթաղ կատարելու գյուտի փորձարկման աշխատանքներ իրականացնելու համար աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ հարցը լրացուցիչ կուսումնասիրվի և ֆինանսավորման հնարավորության դեպքում նրան լրացուցիչ կտեղեկացվի:
Ճագարաբուծական ֆերման ընդլայնելու, մասնավորապես	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ նախարարությունը մշակել է և առաջի-

օդափոխության համակարգ ներդնելու նպատակով աջակցություն ցուցաբերելու մասին					կայում նախատեսում է մեկնարկել լիզինգի նոր ծրագիր, որի շրջանակներում շահառուները հնարավորություն կունենան մատչելի պայմաններով ձեռք բերել անհրաժեշտ սարքավորումներ:
Լճաշեն համայնքում կաթի վերամշակման ներդրումային ծրագրի ֆինանսավորման հարցում աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ նախարարությունը մշակել է և առաջիկայում նախատեսում է մեկնարկել լիզինգի նոր ծրագիր, որի շրջանակներում շահառուները հնարավորություն կունենան մատչելի պայմաններով ձեռք բերել վերամշակման ոլորտի համար անհրաժեշտ սարքավորումներ և տեխնիկա:
«Ֆինքա» ՈՒՎԿ-ին ունեցած վարկային պարտավորությունները սառեցնելու նպատակով աջակցություն ցուցաբերելու և խոզերի անկման դեպքի վերաբերյալ պարզաբանումներ տրամադրելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ հարցի առնչությամբ հարուցված է քրեական գործ, որի շրջանակներում նրան կտրվեն բարձրացված հարցերի պատասխանները: Միաժամանակ քաղաքացուն տեղեկացվել է, որ նախարարությունը չունի լծակներ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությանը միջամտելու համար:
Խոզերի աֆրիկական ժանտախտ հիվանդության հետևանքով անկած կենդանիների դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ նրա կողմից բարձրացված հարցի վերաբերյալ նախկինում բազմիցս տրվել են սպառիչ պատասխաններ:
«Էկոպլաստ» ՍՊԸ-ի կողմից արտադրվող օրգանական պարարտանյութի իրացման հարցում աջակցություն ցու-	1			1	Հանձնարարվել է ՀՀ ԳՆ բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետին՝ պարարտանյութերի փորձարկման արդյունքների հիման

ցաբերելու վերաբերյալ					վրա ներկայացնել առաջարկություն դրանց կիրառման նպատակահարմարության և արդյունավետության վերաբերյալ:
Աշխատանքով ապահովելու և գյուղոլորտին՝ մասնավորապես գենետիկորեն ձևափոխված սերմերի կիրառմանն առնչվող խնդիրների մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում գործում է քաղաքացիական ծառայության համակարգը, ըստ որի թափուր պաշտոններում նշանակվում են մրցութային կարգով: Միաժամանակ տեղեկացվել է քաղաքացուն, որ ԳՁՕ-ների կիրառման անվտանգությանն առնչվող հարցերը գտնվում են նախարարության ուշադրության կենտրոնում:
Տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում ձեռք բերված երինջների դիմաց վճարման ժամանակացույցում փոփոխություններ կատարելու մասին	1			1	Քաղաքացուն պարզաբանվել է, որ աշխատանքներ են տարվում հարցի կարգավորման ուղղությամբ, որի արդյունքների մասին բոլոր շահառուներին կտեղեկացվի:
Ինտենսիվ այգիների հիմնման գործում աջակցություն ցուցաբերելու մասին	1			1	Հանձնարարվել է ՀՀ ԳՆ բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ Ռ. Նազարյանին աջակցել քաղաքացուն: Միաժամանակ առաջարկվել է քաղաքացուն օգտվել Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից:
Հայաստանի Հանրապետութ-	1			1	Քաղաքացուն առաջարկվել է ներդրու-

յունում կանեփի աճեցման ներդրումային առաջարկի և դրա արտադրության կազմակերպման իրավական խոչընդոտների վերացման գործում աջակցություն ցուցաբերելու մասին					մային ծրագրային առաջարկը՝ գրավոր, ներկայացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարություն: Վերջինս կներկայացվի շահագրգիռ պետական գերատեսչություններին՝ կարծիքի:
Ընդամենը	15			15	